

ՀԱՆԴԵՍ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՏՈՒՓՈՍ ՄԵՆՑԷԼ

Ատուլփոս Մենցէլ գերմանացի քաջանուն նկարիչն ու վիմագիրն, պեռլինեան դպրոցին գլխաւորաց մին համարուած է: Հմտութիւնն, գիւտն, հանճարն և ճշմարտութիւնն իր յօրինուածոց սովորական յատկութիւնքն են:

Այս հռչակաւոր անձն՝ ծնաւ ի Պրեսլաւ յամին 1815 դեկտեմբեր 8, և ի սկզբան գրագիտական և ուսումնական խնամառատ դաստիարակութիւն ընդունելէն ետքը, կատարեց ապա Պեռլինի ակադեմիական ուսման ընթացքն, ուր որոշած էր իր հայրն վիմագրութեան արուեստանոց մը հաստատել: Բայց չախորժելով գրագիտական կեանքն և ուզելով իր ախորժանաց հետեւիլ, ինքն իրեն ուսուցիչ եղած՝ սկսաւ նկարչութեան հետամուտ ըլլալ: Յամին 1833 հրատարակեց շարք մը վիմագրութեանց Պաւլոստոսիքի յարուստաւորի անուամբ, որովք մեծապէս փայլեցաւ բրուսիացի արուեստաւորաց մէջ:

Այս առաջին յաջողութենէն քաջալերուած նորընծայ արհեստաւորն, վիմագիր մեծ գործողութեան մը ձեռք զարկաւ, այն է Պրաւնտէպոշրկ-քրոշսիական պատմութեան նկարները փորագրել, որ կը սկսի յանձնաթիւ և յանդիշատակ ժամանակաց, և կ'իջնէ մինչև յանկումն առաջին նաբոլէոնեան կայսերութեան, այսինքն մինչև այն վերջին պատերազմը, զոր Գերմանացիք պատերազմ ազատութեան կ'անուանեն: Այս ձեռնարկը աւարտեցաւ յամին 1837, ի մեծ փառս և ի պարծանս հեղինակին. որոց մէջ կ'երևին ծայրագոյն աստիճանի ոյժ և կորովութիւն:

Այս ատեններս տակաւին ի տիս երիտասարդութեան էր Մենցէլ, առանց առաջնորդի և առանց ուսուցչի, բայց այնպէս խորամուխ թափանցած էր յարուեստական գաղտնիս իւղաներկ նկարու, որ քիչ ժամանակի մէջ հրատարակեց իր առաջին նկարն, որուն նիւթն էր՝ Խորհուրդ մը ի տաւն փաստաւանի, նկար լի աժխութիւ, որուն յաջորդեցին մէկէն ուրիշներ ալ, ինչպէս նկարքն՝ Օր դատաւարանի, Շրջագայոքի ձև մը Մեծիկ փրեդերիկոսի, և այլն:

Բայց կ'երևայ որ Մենցէլ իր հանճարն աւելի Մեծին փրեդերիկոսի կեանքը ու պատմութիւնը ընդհանրացրնելուն ունիրած ըլլայ, ուստի հնգետասան ամ շարունակ աշխատեցաւ, և ի լոյս հանեց Մեծին փրեդերիկոսի կենաց վերաբերեալ շատ մը վիմագրութիւններ, ինչպէս՝ Պաւլոստոսիքի Մեծիկ փրեդերիկոսի, Բաւարական Մեծիկ փրեդերիկոսի համագգետեալ, Զինուորք Մեծիկ փրեդերիկոսի, Զօրավարք Մեծիկ փրեդերիկոսի, և ուրիշ բազում վիմագրութիւններ նոյն դիւցազին կենաց վերաբերեալ, որոց թիւն մինչև չորս հարիւրի կը հասնի, որք զարդարեն զգեղեցիկ Պաւլոստոսիքի Մեծիկ փրեդերիկոսի տպագրեալ ի Լիւսիա ի վեպէր Գերմանացւոյ: Այնպիսի մեծ համբաւ ու անուն ժառանգեց Մենցէլ իր այս գործոյն համար, այսինքն Բրուսիացի դիւցազին կեանքն ի պատկերի ներկայացրնելուն՝ ի խանձարրոց մինչև ի գերեզման, ընծայելով աշխարհի բոլոր իր յաղթանակներն ու ձախորդութիւններն, ուրախութիւններն ու ցաւերն, որ ժողովուրդն զՄենցէլ նկարիչ փրեդերիկոսի Մեծիկ անուանէ:

Պաշտօնը և ճանապարհը, հրապարակը և գիւղը, եկեղեցիք և արքունիք, միջին դարն ու ներկայն, իշխանք ու քաղաքացիք, շինականք ու զինուորք, քաղաքք և աւանք, դղեակք ու տնակք, միով բանիւ ամենայն ինչ կ'երևին միա-

համուռ իր վիմագրութեանց ու իւղաներկ նկարուց մէջ:

Այնքան մեծցաւ Մենցելի համբաւն որ անդամ անուանեցին զինքը Պետլինի գեղարուեստից Ակադեմիային:



ԱՏՈԼՓՈՍ ՄԵՆՑԵԼ

ԲԱԼԷՌԻՍՏԱՆ

Բալէդքաբա այն անմահանունն անձն է, որուն հանճարոյն առջին գոգցես և բնութիւնն իսկ զարհուրելով տեղի տուաւ. Բալէդքաբա այն սակաւածին մարդկանցմէ է՝ որոյ վրայ կրնան պարծիլ ամենայն ազինք թէ ծնան զնա. վասն զի երկարատե կենօրն օգտակար եղաւ ոչ միայն իր հայրենեաց այլ

և բոլոր աշխարհի: Կապուած է անունը ոչ թէ միայն իտալական ազգային ազատութեան դարուն ու դիպաց հետ, այլ և դարուս մեծամեծ ձեռնարկութեանց ու իրաց հետ: Միացուց իր վրայ ի ծայրագոյն աստիճանի հայրենեաց ու գիտութեան սէրը, ուստի յաջողելով այն երկու սիրելութեան մէջ, կոչեցաւ զլուխ ճարտարապետաց և նահատակ հայրենեաց: